

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143, U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխավէնտ, Օհայօ

25 Ապրիլ, 78

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,  
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի եւ Քանատայի,  
ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Գեր. Սրբազան,

Ենորհակալութեամբ ստացանք ձեր Ապրիլ 6, 1978 թուակրով եւ 25736  
թուահամարով պաշտօնագիրը՝ որով կը վաւերացնէք համայնքիս Միական ժողո-  
վին մէջ կայացած Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը: Ուզած էք  
որ շուտով Առաջնորդարան փութացուի նաեւ Անուանացանկը նորընտիր Դիւանին  
մաս կազմող անդամներուն, հանդերձ իրենց հասցէներով եւ հեռաձայնի թի-  
ւերով:

Երէկ էր միայն, Երկուշաբթի, Ապրիլ 24, որ առաջին առիթը կը ներկա-  
յանար Միական Խորհուրդիս, յետ ձեր վաւերացումին, եւ այդ ժողովին մէջ  
միայն կարելիութիւն ստեղծուեցաւ նոր դիւանի ընտրութեան. ձեռնարկել:  
Սոյն ժողովին մասնակցեցան Միական Խորհուրդիս ամբողջական կազմը, իր  
դադարեալ եւ նորընտիր անդամներով, որպէս զի Միական Խորհուրդի փոխան-  
ցումը կատարուեց աւելի հեզասահօրէն, նոր Դիւանի ընտրութեամբ: Ժողովը,  
Օրակարգի հարցերու սպառումէն վերջ, հետեւելով մեր Թեմական Կանոնադրու-  
թեան տրամադրութեան, զադտնի քուէարկութեամբ ընտրեց իր նոր դիւանը  
(անշուշտ առանց դադարեալ անդամներու մասնակցութեան), եւ ուրախ եմ  
հաստատելու որ միաձայնական արդիւնքով կարելի եղաւ ընտրութիւնը կայա-  
ցընել, ինչ որ ինքնին յոյս կը ներշնչէ եւ կերտաշխարհէ համերաշխ գոր-  
ծունէութիւն ապագային:

Ըստ վերոյիշեալ ընտրութեան արդիւնքին՝ մեր նոր շրջանի Միական Խոր-  
հուրդի Դիւանը կը ներկայանայ հետեւեալ կազմով.—

- |           |                 |              |
|-----------|-----------------|--------------|
| Պարոնայք՝ | ձէք Խաչերեան    | Ատենապետ     |
|           | Տէյվիտ Անտոնեան | Փոխ-Ատենապետ |
|           | Սեմ Միրաթեան    | Գանձապահ     |
|           | Գրիգոր Ղազարեան | Ատենադպիր    |

Իբրեւ յաւելուածական տեղեկութիւն՝ յիշենք որ ժողովականները նկատի  
առնելով մեր Կանոնադրութեամբ նախատեսուած՝ Օգնական Գանձապահի եւ Օգնա-  
կան Ատենադպրի պաշտօնները, եւ նկատի ունենալով նաեւ ատոր առնչութեամբ՝  
Միական Խորհուրդի ամբողջական անձնակազմին նուազումը (11էն՝ 9-ի), յետ  
խորհրդակցութեան եւ ընդհանուրին հաւանութեամբ եւ ընտրութեամբ՝ որոշեցանք  
որ Փոխ-Ատենապետի պաշտօնը ունեցողը նաեւ վարէ Գանձապահի Օգնականի պաշ-  
տօնը, իսկ Ատենադպրի Օգնականի պաշտօնին ընտրուեցաւ Տիկ. Յարութս Կէօթ-  
ճիեան, ստանձնելով թղթակցութեանց պատասխանատուութիւնը եւ թողլով ժո-  
ղովներու արձանագրութեան գործը պաշտօնական Ատենադպրին: Անշուշտ հաս-  
կընալի է որ այս Օգնականներուն ստանձնած պատասխանատուութեանց մաս կը  
կազմէ այն որ՝ անոնք վարեն Գանձապահի եւ Ատենադպրի պարտականութիւնները  
(Շար. ետեւի էջը)

այս վերջիններուն բացակայութեան պարագային, ինչպէս պարագան նոյնն է  
Փոխ-Ատենապետի պարագային որ կը վարէ Ատենապետի պարտականութիւնները,  
այս վերջնոյս բացակայութեան պարագային, համաձայն մեր Կանոնադրութեան:  
Դիւանին Չորս հոգինոց անձնակազմին վրայ փարթեւով ուրեմն մնացեալ  
Հինգ հոգիները (մէջն ըլլալով Օգնական Ատենապետը) որոնք իբրեւ խոր-  
հրդական կամբողջացնեն Միական Խորհուրդիս այս տարուան Ինը հոգինոց  
լրիւ կազմը, որոնք են. --

Տիկ. Նիւորանս Կէօքճեան:

Տքթ. Գեղամ Կէօքճեան:

Պրն. ձան Պորզանեան:

Օր. Մարկարիթ Երանեան:

Տիկ. Նիւորանս Թրճանտա Գարսոլանեան:

Ներփակ գրոյս կցուած հաճեցէք ունենալ 1978 տարուոյ մեր Միական  
Խորհուրդի ամբողջական կազմին անուանացանկը, հանդերձ պաշտօններով,  
հասցէներով եւ հեռաձայնի թիւերով, զոր փութացուցած ենք ձեզի, հետե-  
ւեւ ձեր հրահանգին:

Մնամք Ձերդ խոնարհաբար,

*Ս. Տիրան Զհնյ. Փափազեան*  
Ս. Տիրան Զհնյ. Փափազեան,  
Հովիւ եւ նախագահ Միական Խորհուրդի

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143. U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավոր, Օհայո

PARISH COUNCIL 1978

OFFICERS

Mr. Jack Hacherian, Chairman  
2726 Sinton Place  
Pepper Pike, Ohio 44124                      Phone: 292-7493

Mr. David Andonian, Vice Chairman  
3326 Glencairn Road  
Shaker Heights, Ohio 44122                      Phone: 561-3536

Mr. Sam Mirakian, Treasurer  
853 Belwood Drive  
Highland Heights, Ohio 44143                      Phone: 449-2188

Mr. Krikor Ghazarian, Secretary  
666 Richmond Road  
Richmond Heights, Ohio 44143                      Phone: 381-6590

ADVISORS

Mrs. Florence Goekjian  
18301 S. Woodland  
Shaker Heights, Ohio 44120                      Phone: 991-3228

Dr. Kegham K. Goekjian  
18301 S. Woodland  
Shaker Heights, Ohio 44120                      Phone: 991-3228

Mr. John Borazanian  
4608 Wilburn Drive  
South Euclid, Ohio 44121                      Phone: 291-1939

Mrs. Florence Karoghlanian  
440 Richmond Park East, Apt. 330C  
Richmond Heights, Ohio 44143                      Phone: 461-4964

Miss Margaret Yeranian  
14740 Broadway  
Maple Heights, Ohio 44137                      Phone: 663-7988